Դատական Գործ N: ՎԴ/12248/05/21

Վարչական

Նոր քաղաքացիական գործ	
Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:	05-11-2021
Հայցվոր/դիմող	
Անվանում:	Ինֆորմացիայի ազատության կենտրոն ԻԱԿ
Հասցե:	ք.Երևան, Բուզանդի 1/3 4-րդ հարկ
Ներկայացուցիչ	
Անուն	Շուշան
Ազգանուն	Դոյդոյան
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Պատասխանող	
Անվանում:	Երևանի քաղաքապետարան
Հասցե:	ք.Երևան, Արգիշտի 1
Ինքնուրույն պահանջ ներկայացնող:	
3-րդ անձ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Պահանջ:	ք.Երևան, Սիլիկյան հին խճուղի 60/1 հասցեի վերաբերյալ հայցված տեղեկատվությունը տրամադրելուն պարտավորեցնելու պ/մ
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	2.2
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Լրացուցիչ պահանջի վիճակագրության տողի համարը:	
Այլ նշումներ:	
Պահանջն անհատականացնող տվյալ:	
Ստացման եղանակ:	Փոստով
Պետական տուրք	
Անդորրագիրը/Միջնորդությունը դատարան ներկայացնելու ամսաթիվ:	05-11-2021
Ներկայացվել է:	Անդորրա(գրեր)գիր

Պետ. տուրքի վճարման ամսաթիվը:	02-11-2021
Պետ. տուրքի վճարման անդորրագրի համարը:	001755
Պետ. տուրք (ՀՀ դրամ):	10000
Այլ նշումներ:	

Մակագրել (Նախագահի կողմից)

Գործի համար:	ՎԴ/12248/05/21
Ամսաթիվ:	05-11-2021
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Վարչական
Դատավորի անուն:	Գրիգոր Սամվելի Առաքելյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Վարչական
Դատավորի անուն:	
Այլ նշումներ:	

Հայցադիմումը վերադարձվել է

Ամսաթիվ:	12-11-2021
Որոշման հիմքը	
Հոդված	5,77,79,123,127,131
Օրենսգիրք:	Վարչական դատավարության օրենսգիրք
Որոշման բովանդակություն:	
Այլ նշումներ:	

Դատական ակտ

Դատական ակտ:	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ Վարչական գործ թիվ ՎԴ/12248/05/21 Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ 12.11.2021թ. ք. Երևան Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը, դատավոր՝ Գ.Առաքելյան, ծանոթանալով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» կազմակերպության անունից նախագահի կողմից ներկայացրած հայցադիմումին ու դրան կցված փաստաթղթերին, Պ Ա Ր Զ Ե Ց

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» կազմակերպության նախագահը 05.11.2021թ. հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ ք. Երևան, Սիլիկյան հին խճուղի 60/1 հասցեի վերաբերյալ հայցված տեղեկատվությունը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին:
Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը՝ դատարանը եզրակացրեց, որ հայցադիմումը ենթակա է վերադարձման՝ հետևյալ պատճառաբանությամբ.
Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե չեն պահպանվել սույն օրենսգրքի 73-րդ հոդվածի և 74-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով սահմանված՝ հայցադիմումին առաջադրվող պահանջները, ինչպես նաև սույն օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված պահանջը, եթե համապատասխան վիճարկվող ակտը կամ դրա պատճենը հնարավոր է ներկայացնել:
Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ հայցադիմումը բովանդակում է՝ տեղեկություններ՝ վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը վերադասության կարգով բողոքարկելու վերաբերյալ:
Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել կատարելու որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալու այնպիսի գործողություններից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը:
Գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել նաև օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում տրամադրել օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը:
Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ գործողության կատարման հայցի դեպքում՝
ա. մեկամսյա ժամկետում՝ վարչական մարմնի կողմից գործողության կատարումը մերժելու մասին իրազեկվելու պահից,
բ. երկամսյա ժամկետում այն պահից, երբ լրացել է հայցվող գործողության կատարման համար սահմանված ժամկետը,
գ. եռամսյա ժամկետում այն պահից, երբ դիմում է ներկայացվել հայցվող գործողությունը կատարելու համար, եթե առկա չեն սույն կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված դեպքերը:
Սույն դեպքում, հայցվորը հայցադիմումով նշել է, որ 04.08.2021 թվականին դիմել է պատասխանողին՝ տեղեկատվություն տրամադրելու մասին, որին ի պատասխան պատասխանողը հայտնել է, որ տեղեկատվության հայցմամբ տրված հասցեի հետ որևէ լիազորություն չունի: Այնուհետև՝ 12.08.2021 թվականին կրկին դիմել է պատասխանողին և ստացել է նույն պատասխանը, որից հետո 19.08.2021 թվականին կրկին դիմել է պատասխանողին՝ ստույգ պատասխան ստանալու համար, սակայն կրկին ստացվել է նույն պատասխանը: Միաժամանակ, հայցվորը նշել է, որ 02.09.2021 թվականին ներկայացվել է վարչական բողոք, որը թողնվել է անպատասխան:
Դատարանը նաև արձանագրում է, որ հայցադիմումին կից դատարան չի ներկայացվել հայցվորի կողմից նշված՝ 02.09.2021 թվականին Երևանի քաղաքապետարան ներկայացված վարչական բողոքի օրինակը և այն պատասխանողի կողմից ստացվելու հանգամանքը հաստատող որևէ ապացույց:
Այսպիսով, դատարանը նշում է, որ քննարկվող հայցապահանջը ներկայացված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված հայցատեսակին համապատասխան, որպիսի հայցատեսակով դատական պաշտպանության դիմելու համար Օրենսդրի կողմից սահմանված են հստակ ժամկետներ, իսկ սույն դեպքով՝ հայցվորը տեղեկատվությունն առաջին անգամ հայցել է 04.08.2021 թվականին,

	այնուհետև՝ 12.08.2021թ. և 19.08.2021թ., միաժամանակ, պնդում է, որ 02.09.2021 թվականին ներկայացրել է վարչական բողոք, սակայն հայցադիմումին կից ներկայացված չեն ո՛չ վարչական բողոքը, ո՛չ այն պատասխանողի կողմից ստանալու փաստը հաստատող որևէ ապացույց, ուստի դատարանը նշում է, որ անհրաժեշտ է դատարան ներկայացնել վերը նշված ապացույցները, որպեսզի դատարանը հնարավորություն ունենա քննարկելու հայցադիմումը դատարան ներկայացնելու համար սահմանված դատավարական ժամկետների պահպանման հարցը, հետևաբար հայցադիմումը ենթակա է վերադարձման՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով: Միաժամանակ դատարանը նշում է, որ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայցադիմումում թույլ տրված սխալները վերացնելու և որոշումը ստանալու օրվանից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, վարչական դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը վարույթ ընդունված է համարվում սկզբնական ներկայացման օրը: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 77-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ և 7-րդ կետերով, 123-րդ հոդվածով, 127-րդ հոդվածի 11-րդ մասով, 131-րդ հոդվածով, դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց 1. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» կազմակերպության անունից ներկայացված հայցադիմումը և դրան կցված փաստաթղթերը վերադարձնել հայցվորին: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշումն ստանալուց 5 օր հետո և մինչև օրինական ուժի մեջ մտնելու սահմանված ժամկետը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարան: ԴԱՏԱՎՈՐ ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Դատական ակտի ամսաթիվը:	12-11-2021
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. (ՀՀ դրամ):	0
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձ. ենթակա պետ (ԱՄՆ դոլլար):	
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձ. ենթակա պետ (Եվրո):	
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձ. ենթակա պետ (ՌԴ ռուբլի):	

Ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելու և ... մասին դատական ակտ կայացրած դատավորների ցանկ

Դատարանի անվանում:	Վարչական
Դատավորի անուն:	

Որոշումն ուղարկվել է կողմերին

Ամսաթիվ:	12-11-2021
Ելքի համարը:	ԴԴ-9-Ե-50343/21

Այլ նշումներ:	

Պետ. տուրքը վերադարձվել է (անդորրագիրը)

Ամսաթիվ:	12-11-2021
Պետ. տուրք (ՀՀ դրամ):	10000
Այլ նշումներ:	

Հայցադիմումը կրկին ներկայացվել է

Ներկայացման ամսաթիվ:	25-11-2021

Մակագրել (Նախագահի կողմից)

Գործի համար:	ՎԴ/12248/05/21
Ամսաթիվ:	25-11-2021

Նախագահող դատավոր

Դատարանի անվանում:	Վարչական
Դատավորի անուն:	Արմեն Գոգոլի Ներսիսյան

Դատավոր

Դատարանի անվանում:	Վարչական
Դատավորի անուն:	
Այլ նշումներ:	

Պետական տուրք

Անդորրագիրը/Միջնորդությունը դատարան ներկայացնելու ամսաթիվ:	25-11-2021
Ներկայացվել է:	Անդորրա(գրեր)գիր
Պետ. տուրքի վճարման ամսաթիվը:	02-11-2021
Պետ. տուրքի վճարման անդորրագրի համարը:	001755
Պետ. տուրք (ՀՀ դրամ):	10000
Այլ նշումներ:	

Ընդունվել է վարույթ

Որոշման ամսաթիվ:	02-12-2021
Որոշման բովանդակություն:	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ «02» դեկտեմբերի 2021 թվական ք. Երևան

Վարչական գործ թիվ ՎԴ/12248/05/21

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը /այսուհետ նաև՝ Դատարան/, նախագահությամբ Արմեն Ներսիսյանի, ծանոթանալով <<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> ՀԿ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

Պ Ա Ր Զ Ե Ց

<<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> ՀԿ ընկերության /ներկայացուցիչ՝ Շուշանիկ Դոյդոյան/ կողմից 05.11.2021 թվականին հայցադիմում է ստացվել Դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ քաղաք Երևան, Սիլիկյան հին խճուղի 60/1 հասցեի վերաբերյալ հայցված տեղեկատվությունը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին:
Դատարանի՝ 12.11.2021 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:
25.11.2021 թվականին հայցադիմումը կրկին ներկայացվել է Դատարան:
Ուսումնասիրելով կրկին ներկայացված հայցադիմումը և կից փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ դրանք ներկայացվել են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ, 74-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի համաձայն՝ հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:
Միաժամանակ Դատարանը գտնում է, որ սույն գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով պետք է գործը նախապատրաստել դատաքննության և կողմերին հրավիրել նախնական դատական նիստի:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ, 74-րդ, 77-րդ, 78-րդ, 89-րդ, 123-րդ հոդվածներով, 127-րդ հոդվածի 10-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ, 200-րդ հոդվածներով, Դատարանը՝

Ո Ր Ո Շ Ե Ց
<<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> ՀԿ ընկերության հայցադիմումն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ քաղաք Երևան, Սիլիկյան հին խճուղի 60/1 հասցեի վերաբերյալ հայցված տեղեկատվությունը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ընդունել վարույթ:
Սույն վարչական գործը նախապատրաստել դատաքննության և կողմերին հրավիրել նախնական դատական նիստի 2022 թվականի փետրվարի 15-ին, ժամը 11:40-ին, ՀՀ վարչական դատարանի շենքում, հասցե՝ ք.Երևան, Գ.Նժդեհի 23, թիվ 16-րդ դատական նիստերի դահլիճ:
Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ ԱՐՄԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Այլ նշումներ:	

Նշանակվել է դատաքննություն	
Դատաքննության ամսաթիվ:	15-02-2022
Ծանուցագիրը ուղարկվել է:	02-12-2021
Ժամ:	11:40
Նիստերի դահլիճի համար:	16
Նշանակվել է:	Նախնական դատական նիստ

Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Այլ նշումներ:	

Անավարտ գործեր

Հաշվետու ժամանակահատված:	2021 թվական
Տեսակը:	Անավարտ գործեր, որոնք գտնվում են քննության փուլում
Այլ նշումներ:	

Նշանակվել է դատաքննություն

Դատաքննության ամսաթիվ:	19-05-2022
Ծանուցագիրը ուղարկվել է:	18-02-2022
Ժամ:	11:40
Նիստերի դահլիճի համար:	16
Նշանակվել է:	Դատաքննություն
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Այլ նշումներ:	

Նշանակվել է դատաքննություն

Դատաքննության ամսաթիվ:	09-06-2022
Ծանուցագիրը ուղարկվել է:	19-05-2022
Ժամ:	16:35
Նիստերի դահլիճի համար:	16
Նշանակվել է:	Վճիռ/որոշում հրապարակելու օր
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Այլ նշումներ:	

Հայցի/հակընդդեմ հայցի լուծումը

Հայցի լուծման ամսաթիվ:	09-06-2022
Հայցի լուծումը:	Բավարարվել է

Հոդված

Հոդված	60-րդ, 114-րդ, 123-127-րդ և 132-րդ

Հակընդդեմ հայցի լուծումը:	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Այլ նշումներ:	
Օրենսգիրք:	Վարչական դատավարության օրենսգիրք
Դատական ակտ	
Դատական ակտ:	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ Վ Ճ Ի Ռ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «09» հունիսի 2022 թվական վարչական գործ թիվ ՎԴ/12248/05/21 ք. Երևան Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը /այսուհետ՝ Դատարան/ նախագահությամբ՝ դատավոր Արմեն Ներսիսյանի քարտուղարությամբ՝ Ա. Եղիազարյանի, Է. Լազյանի մասնակցությամբ՝ հայցվորի ներկայացուցիչ Գևորգ Հայրապետյանի, նույնականացման քարտ 004455168, տրված 26.12.2004թ., 001-ի կողմից, հաշվառված՝ ք. Երևան, Դավթաշեն 1-ին թաղամաս, 51 շենք, բն. 56 դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ ընկերության ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ քաղաք Երևան, Սիլիկյան հին խճուղի 60/1 հասցեի վերաբերյալ հայցված տեղեկատվությունը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին՝ Պ Ա Ր Զ Ե Ց Գործի դատավարական նախապատմությունը. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ ընկերության /ներկայացուցիչ՝ Շուշանիկ Դոյդոյան/ կողմից 05.11.2021 թվականին հայցադիմում է ստացվել Դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ քաղաք Երևան, Սիլիկյան հին խճուղի 60/1 հասցեի վերաբերյալ հայցված տեղեկատվությունը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին: Դատարանի (դատավոր Գ. Առաքելյան)՝ 12.11.2021 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է: 25.11.2021 թվականին հայցադիմումը կրկին ներկայացվել է Դատարան և նույն օրը մակագրվել է դատավոր Արմեն Ներսիսյանին՝ դատավոր Գ. Առաքելյանի՝ դատավորների 2021թ. վերապատրաստման դասընթացներին մասնակցելու կապակցությամբ: Դատարանի՝ 02.12.2021 թվականի որոշմամբ կրկին ներկայացված հայցադիմումն ընդունվել է վարույթ և հրավիրվել է նախնական դատական նիստ: Դատարանի՝ 15.02.2022 թվականի որոշմամբ սույն վարչական գործը նշանակվել է դատաքննության:

Դատարանը 19.05.2022 թվականին դատաքննությունն ավարտված համարելով՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի հրապարակման օր է հայտարարել 09.06.2022 թվականը:

Հայցվորի փաստարկները, հիմնավորումները և պահանջը.
Դատարան ներկայացրած հայցադիմումով հայցվորը հայտնել է, որ 04.08.2021թ., 12.08.2021թ. և 19.08.2021թ. դիմել է Երևանի քաղաքապետարան՝ քաղաք Երևան, Սիլիկյան հին խճուղի 60/1 հասցեի վերաբերյալ տեղեկատվություն հայցելու նպատակով, սակայն, պատասխանողը ներկայացրել է ոչ լիարժեք տեղեկատվություն: 02.09.2021թ. հայցվորը ներկայացրել է վարչական բողոք, որը թողնվել է անպատասխան:
Խնդրել է պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանին հայցվորին տրամադրելու քաղաք Երևան, Սիլիկյան հին խճուղի 60/1 հասցեի վերաբերյալ հայցված տեղեկատվությունը:

Պատասխանողի փաստարկները, հիմնավորումները և պահանջը.
Պատասխանող Երևանի քաղաքապետարանը չի ներկայացրել հայցադիմումի պատասխան կամ որևէ առարկություն:

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.
- հայցվորի՝ Երևանի քաղաքապետին ուղղված՝ 04.08.2021թ. դիմում, որով հայցվել է հետևյալ տեղեկատվությունը. 1) տեղյակ է, արդյո՞ք, Երևանի քաղաքապետը Երևան քաղաքի Սիլիկյան հին խճուղի 60/1 հասցեի բնակելի թաղամասի անմիջական հարևանությամբ գործող քարի արտադրամասի անօրինական գործունեության մասին, 2) ի՞նչ քայլեր է ձեռնարկել/ձեռնարկում քաղաքապետարանը արտադրամասի անօրինական գործունեությունն անհապաղ դադարեցնելու նպատակով,
- Երևանի քաղաքապետարանի՝ 10.08.2021թ. թիվ 19/98733 գրությունը՝ ի պատասխան հայցվորի՝ 04.08.2021թ. դիմումի, որով հայտնվել է, որ ի կատարումն ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/5941/05/21 վարչական գործով 28.07.2021թ. տրված կատարողական թերթի՝ հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի ավագ հարկադիր կատարողի որոշմամբ արգելվել է Երևանի քաղաքապետարանին Երևան քաղաքի Սիլիկյան հին խճուղու հարևանությամբ գտնվող շինության քանդումը և/կամ ապամոնտաժումը: Հայտնվել է նաև, որ արտադրամասի գործունեությունը դադարեցնելու առումով Երևանի քաղաքապետարանը լիազորություն չունի,
- հայցվորի՝ Երևանի քաղաքապետին ուղղված՝ 12.08.2021թ. դիմում, որով հայցվել է հետևյալ տեղեկատվությունը. 1) ո՞ր պետական մարմնի լիազորությունն է կասեցնելու կամ դադարեցնելու համայնքին պատկանող հողամասում անօրինական գործող արտադրամասի գործունեությունը, 2) ունի, արդյո՞ք, քարի արտադրամասի տնտեսվարողը (ՄԻՔԱՅԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ ՍԵՐԳԵՅԻ Ա/Ձ-ն) համայնքային հողի օրինական օգտագործման կամ վարձակալության պայմանագիր քաղաքապետարանի կամ Աջափնյակի թաղապետարանի հետ, թե՞ նա պարզապես զավթել է համայնքին պատկանող հողը, 3) ինչու՞ է Երևանի քաղաքապետարանը դրսևորել անգործություն, և անգամ հեղափոխությունից հետո՝ մինչև 2021 թվականի ապրիլի 30-ը, համայնքին պատկանող հողի վրա 10 տարուց ավելի անօրինական գործունեություն ծավալող քարի արտադրամասը չի քանդել կամ ապամոնտաժել,
- Երևանի քաղաքապետարանի՝ 19.08.2021թ. թիվ 19/102668 գրությունը՝ ի պատասխան հայցվորի՝ 12.08.2021թ. դիմումի, որով հայտնվել է, որ ի կատարումն ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/5941/05/21 վարչական գործով 28.07.2021թ. տրված կատարողական թերթի՝ հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի ավագ հարկադիր կատարողի որոշմամբ արգելվել է Երևանի քաղաքապետարանին Երևան քաղաքի Սիլիկյան հին խճուղու հարևանությամբ գտնվող շինության քանդումը և/կամ ապամոնտաժումը,
- հայցվորի՝ Երևանի քաղաքապետին ուղղված՝ 19.08.2021թ. դիմում, որով հայցվել է հետևյալ տեղեկատվությունը. 1) ո՞ր պետական մարմնի լիազորությունն է կասեցնելու կամ դադարեցնելու համայնքին պատկանող

հողամասում անօրինական գործող արտադրամասի գործունեությունը, 2) ունի, արդյո՞ք, քարի արտադրամասի տնտեսվարողը (ՄԻՔԱՅԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ ՍԵՐԳԵՅԻ Ա/Ձ-ն) համայնքային հողի օրինական օգտագործման կամ վարձակալության պայմանագիր քաղաքապետարանի կամ Աջափնյակի թաղապետարանի հետ, թե՞ նա պարզապես զավթել է համայնքին պատկանող հողը, 3) ինչու՞ է Երևանի քաղաքապետարանը դրսևորել անգործություն, և անգամ հեղափոխությունից հետո՝ մինչև 2021 թվականի ապրիլի 30-ը, համայնքին պատկանող հողի վրա 10 տարուց ավելի անօրինական գործունեություն ծավալող քարի արտադրամասը չի քանդել կամ ապամոնտաժել,
- Երևանի քաղաքապետարանի՝ 25.08.2021թ. թիվ 19/105694 գրությունը՝ ի պատասխան հայցվորի՝ 19.08.2021թ. դիմումի, որով հայտնվել է, որ ի կատարումն ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/5941/05/21 վարչական գործով 28.07.2021թ. տրված կատարողական թերթի՝ հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի ավագ հարկադիր կատարողի որոշմամբ արգելվել է Երևանի քաղաքապետարանին Երևան քաղաքի Սիլիկյան հին խճուղու հարևանությամբ գտնվող շինության քանդումը և/կամ ապամոնտաժումը,
- հայցվորի՝ Երևանի քաղաքապետին ուղղված՝ 02.09.2021թ. բողոքը, որով հայցվորը խնդրել է հարուցել վարչական վարույթ, քննել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ ընկերության՝ 12.08.2021թ. և 19.08.2021թ. հարցումներին ներկայացված պատասխանների իրավաչափությունը, հանձնարարել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ ընկերության հարցումներին ի պատասխան տրամադրել պահանջված տեղեկությունները՝ օրենսդրությամբ սահմանված կարգով և պահանջների պահպանմամբ:

Դատարանի իրավական վերլուծությունները և եզրահանգումը.
Լսելով հայցվորի ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով և գնահատելով գործում առկա ապացույցները Դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է մասնակի բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.
Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը»:
Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:
Սահմանադրության 51-րդ հոդվածի համաձայն. «1. Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք:
2. Տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:
3. Տեղեկություններ ստանալու կարգը, ինչպես նաև տեղեկությունները թաքցնելու կամ դրանց տրամադրումն անհիմն մերժելու համար պաշտոնատար անձանց պատասխանատվության հիմքերը սահմանվում են օրենքով»:
«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն. «1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:
…
3. Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում»:
Նույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Ոչ հավաստի կամ ոչ լրիվ տվյալներ պարունակող տեղեկություն տրամադրած մարմինը կամ կազմակերպությունն այդ տեղեկությունն ստացած անձի գրավոր հարցման հիման վրա պարտավոր է սույն օրենքով սահմանված կարգով անվճար տրամադրել ճշգրտված տվյալներով տեղեկություն»:
Նույն օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն. «Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով … տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն»:
ՀՀ կառավարության՝ 15.10.2015թ. թիվ 1204-Ն որոշմամբ սահմանված և նույն որոշման 2-րդ հավելվածով ներկայացված կարգի 8-րդ կետի համաձայն. «Հարցման պատասխանը պետք է լինի հավաստի և լրիվ՝ պարունակելով բոլոր առաջադրված հարցերի հիմնավոր պատասխանները: Դիմողի կողմից մեկից ավելի հարցերի առաջադրման դեպքում պետական մարմինը հերթական համարակալման միջոցով տրամադրում է բոլոր հարցերի հավաստի և լրիվ պատասխանները:
Դատարանն արձանագրում է, որ հայցվորը, ընդհանուր առմամբ, հայցել է հետևյալ հինգ տեղեկությունները.
1) տեղյակ է, արդյո՞ք, Երևանի քաղաքապետը Երևան քաղաքի Սիլիկյան հին խճուղի 60/1 հասցեի բնակելի թաղամասի անմիջական հարևանությամբ գործող քարի արտադրամասի անօրինական գործունեության մասին,
2) ի՞նչ քայլեր է ձեռնարկել/ձեռնարկում քաղաքապետարանը արտադրամասի անօրինական գործունեությունն անհապաղ դադարեցնելու նպատակով,
3) ո՞ր պետական մարմնի լիազորությունն է կասեցնելու կամ դադարեցնելու համայնքին պատկանող հողամասում անօրինական գործող արտադրամասի գործունեությունը,
4) ունի, արդյո՞ք, քարի արտադրամասի տնտեսվարողը (ՄԻՔԱՅԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ ՍԵՐԳԵՅԻ Ա/Ձ-ն) համայնքային հողի օրինական օգտագործման կամ վարձակալության պայմանագիր քաղաքապետարանի կամ Աջափնյակի թաղապետարանի հետ, թե՞ նա պարզապես զավթել է համայնքին պատկանող հողը,
5) ինչու՞ է Երևանի քաղաքապետարանը դրսևորել անգործություն, և անգամ հեղափոխությունից հետո՝ մինչև 2021 թվականի ապրիլի 30-ը, համայնքին պատկանող հողի վրա 10 տարուց ավելի անօրինական գործունեություն ծավալող քարի արտադրամասը չի քանդել կամ ապամոնտաժել:
Դատարանն արձանագրում է, որ վերը հիշատակված 1-3-րդ և 5-րդ կետերում նշված տեղեկությունները վերաբերում են խնդրո առարկա արտադրամասի ենթադրյալ ապօրինի գործունեությանը, այսինքն՝ ենթադրյալ ապօրինի ձեռնարկատիրական գործունեությանն այն դեպքում, երբ «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքներով համայնքի ղեկավարը չունի արտադրությամբ պայմանավորված ձեռնարկատիրական գործունեության բնագավառում լիազորություններ:
Այսինքն՝ տվյալ դեպքում Երևանի քաղաքապետը չի հանդիսանում «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի իմաստով տեղեկատվություն տնօրինող, ինչը բացառում է համապատասխան տեղեկությունները տրամադրելու օբյեկտիվ հնարավորությունը, և նույնիսկ նման հնարավորության դեպքում, այնուամենայնիվ, Երևանի քաղաքապետը պարտավոր չէր նշված տեղեկությունները տրամադրել հայցվորին, քանի որ կվերազանցեր իր լիազորությունները:
Այլ խնդիր է վերը հիշատակված 4-րդ կետում նշված տեղեկությունը (ունի, արդյո՞ք, քարի արտադրամասի տնտեսվարողը (ՄԻՔԱՅԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ ՍԵՐԳԵՅԻ Ա/Ձ-ն) համայնքային հողի օրինական օգտագործման կամ վարձակալության պայմանագիր քաղաքապետարանի կամ Աջափնյակի թաղապետարանի հետ, թե՞ նա պարզապես զավթել է համայնքին պատկանող հողը), որի առնչությամբ Երևանի քաղաքապետը

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի իմաստով հանդիսանում է տեղեկատվություն տնօրինող:
Այս առումով Դատարանն արձանագրում է, որ այն հանգամանքը, որ ի կատարումն ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/5941/05/21 վարչական գործով 28.07.2021թ. տրված կատարողական թերթի՝ հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի ավագ հարկադիր կատարողի որոշմամբ արգելվել է Երևանի քաղաքապետարանին Երևան քաղաքի Սիլիկյան հին խճուղու հարևանությամբ գտնվող շինության քանդումը և/կամ ապամոնտաժումը, չի կարող հանդիսանալ վերը հիշատակված 4-րդ կետում նշված տեղեկության համար պատշաճ պատասխան, քանի որ հայցվող տեղեկության և պատասխանի բովանդակությունները տարբեր են՝ հայցվել է այլ բնույթի տեղեկություն, սակայն, տրվել է այդ մասով դիմումի բովանդակության հետ բոլորովին կապ չունեցող պատասխան: Ընդ որում, առկա չեն եղել սահմանադրորեն և օրենսդրորեն ամրագրված սահմանափակումներ՝ հայցվող տեղեկությանը պատշաճ պատասխանելու համար:

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին, Դատարանն արձանագրում է հետևյալը.
Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:
Նույն օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:
Նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է, որ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:
Նկատի ունենալով, որ հայցադիմումով ներկայացված ոչ գույքային պահանջի համար պետական տուրքի գումարը նախապես վճարված է, իսկ հայցը ենթակա է մասնակի բավարարման, ուստի, Դատարանը գտնում է, որ Երևանի քաղաքապետարանից հօգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման 10.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:
Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ, 114-րդ, 123-127-րդ և 132-րդ հոդվածներով, Դատարանը՝

Վ Ճ Ռ Ե Ց

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ ընկերության հայցը բավարարել. պատասխանող Երևանի քաղաքապետարանին պարտավորեցնել օրենսդրությամբ սահմանված կարգով և պահանջների պահպանմամբ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ ընկերությանը տրամադրել հետևյալ տեղեկությունը. ունի, արդյո՞ք, քարի արտադրամասի տնտեսվարողը (ՄԻՔԱՅԵԼ ՂԱՁԱՐՅԱՆ ՍԵՐԳԵՅԻ Ա/Ձ-ն) համայնքային հողի օրինական օգտագործման կամ վարձակալության պայմանագիր քաղաքապետարանի կամ Աջափնյակի թաղապետարանի հետ, թե՞ նա պարզապես զավթել է համայնքին պատկանող հողը:
Երևան քաղաքապետարանից հօգուտ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ ընկերության բռնագանձել 10.000 (տաս հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում կկատարվի Հարկադիր

	կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին: Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և մեկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել վերաքննության կարգով՝ Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարան: ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ ԱՐՄԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ
Դատական ակտի ամսաթիվը:	09-06-2022
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. (ՀՀ դրամ):	0
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձ. ենթակա պետ (ԱՄՆ դոլլար):	
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձ. ենթակա պետ (Եվրո):	
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձ. ենթակա պետ (ՌԴ ռուբլի):	

Ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելու և ... մասին դատական ակտ կայացրած դատավորների ցանկ

Դատարանի անվանում:	Վարչական
Դատավորի անուն:	

Փաստաթուղթը գեներացվել է www.datalex.am պորտալի կողմից 10 Հունիս 2022